# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

## ՈՐՈՇՈՒՄ N 59-Ն

« 07 » նոյեմբերի 2016 թվական քաղաք Մարալիկ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԾՆՈՂՆԵՐԻ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի ԹԻՎ 67-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 19 կետի դրույթով

**<u>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.</u>**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի համայնքային ենթակայության հիմնարկներում և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում 2017 թվականի ծնողների կամ նրանց ներկայացուցիչների վճարումների չափը սահմանել՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի համայնքային ենթակայության հիմնարկներում 2016 թվականի ծնողների կամ նրանց ներկայացուցիչների վճարումների չափը սահմանելու և համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 1-ի թիվ 57-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին » թիվ 67 –Ն որոշումը:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
2. ՄԱԿԱՐՅԱՆ ԲԱԲԿԵՆ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍՈՍ
5. ՍԱՀԱԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ
6. ՈՒՌՈՒՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ

**ՔԱՂԱՔԱՊԵՏ՝** **<u>ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ</u>**

ք. Մարալիկ